

✓ Ltn  
2311

1999

# Բ. ՓՌԱՎԱԼԻՒՆ

Փ Ս Ր Զ Ա Ռ Ո Ւ Ւ

ՇԻՇԵՐԻ ԽՈՏՏԱՆԵՐԻ

ԿԱՐ

ՀԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԵՐՈՅ:

2/61

Թարգմանեց



ԹԱԼԻՔԻՑ.

՚ի Տպարանի Յօվհաննիսի Մարտիրոսեանց:  
1879

## ՅԵՌԱՎԱԾԱԲԵՆ:

Սեր զբականութիւնը շատ աղքատ է,  
մանաւանդ ժողովրդական, թէ ինքնուրոյն  
և թէ թարգմանական գրքոյներից։ Այս  
կարիքը շատ զգալի է մեր ազգի համար,  
և յայտնի է, որ մի ժողովրդի մէջ ըն-  
թերցասիրութիւն տարածելու համար ա-  
ռաջ հարկաւոր է այնպիսի գիւրըմբռնե-  
լի գրքոյներ տալ, որ նրանց ուղեղն մար-  
սի. զրդի նրանց գեսփի ընթերցասիրու-  
թիւն - հետևաբար գարզանալ։ (Լաւ կի-  
նէր, որ մեր զբագեա դասը ուշ գարձնէր  
ոյս ամենակարեւոր խնդրին։)

Այսին իսկ ոյս նպատակու թարգմա-  
նեցի հսնկածանօթ Բ. Ֆրանգլինի ոյս  
պրքոյնը, որը վաղուց արգէն յայտնի է  
ըռսաւոր աշխարհին, և իւր ժողովրդա-  
կան լինելուն պատճառաւ աշխատում է-

Дозволено цензурою. Тифлисъ. 17-го Ноя-  
бря 1878 года.

42379-60

24 2312

Tipogr. Martirosianna, na Orob. yd. d. № 5

ին, որքան կարելի է, շատ տարածել ամբոխի մէջ:

Գրքցիս թէ որքան է արժանաւոր և համապատասխան իւր վերնազրին, այդ թողումնեմ ընթերցողներին. միայն այս քանս կարող եմ ասել, որ մի հանձարեղ մարդոց դրչեց վատ բան չէր դրուիլ այն պիսի մի մարդոց, որը ոչ թէ միայն ըսկ գրում ու քարոզում էր, այլ և ծիշտ հետեւլով իւր առաջարկած կանոններին—ծշտութեան, հաստատամութեան, աշխատասիրութեան և խնայողութեան, մշակութեան ստոր աստիճանից բարձրացաւ նուխագահութեան բարձր աստիճանը: Այս մասին աւելորդ չեմ համարում նոյն իսկ Բ. Փրանդլինի խօսքերն առաջ բերել: Ծընուելով աղքատ և իմ երիտասարդական հասակս անցկացնելով աղքատութեան և անյայտութեան մէջ, վերջումն ես հասայ հարստութեան և փոռքի թաղոր յաջում էր ինձ իմ բոլոր ձեռնարկութեանս

մէջ. նա չ'թողեց ինձ, մինչև անգամ, իմ կեանքի վերջին թելը հասած ժամանակը:»

Գրքցիս նպատակից հեռու լինելով Բ. Փրանդլինի ամբողջ կենսազրութիւնը ամբողջապէս ամփոփել յառաջաբանիս մէջ, այնու ամենայնիւ աւելորդ չեմ համարում մի համառօտ հայացք ձգել նրա վերայ:

Բ. Փրանդլինը մի մոմավաճառ աղքատ մարդոց որգի լինելով՝ նա հարկադրուած էր իւր պատենեկութեան հասակում մշակութիւն անելով հաց ծարել. նա առաջին անգամ մօտաւ մէկ տպարան, որ տեղ իւր չափազանց լնդոնակութեամբը շուտով սովորեց գրաշաբառութեան արուեստը: Երկար անյաջողութիւններից և մինչև անգամ գժիրադրութիւններից յետոյ, նա Փիլադելֆիում ստացաւ մի նշանաւոր տպարանի կառավարչի պաշտօն, այս տեղ նա փոքր ինչ ապահովացրեց իւր վիճակը: Հենց այս ժամանակից սկսումն իւր գործնէութիւնը,—մասնակցումն իւր հայրենի-

քի վերաբերեալ հասարակական գործերին, հիմումէ հասարակական ընթերցարաններ և գրականական ընկերութիւններ, հրատարակումէ լրագիր և օրացոյցներ, որոնք ամբոխի զարգացմանը մեծ զարկ էին տալիս: 1736 թ., նա մանումէ տէրութեան ծառայութեան մէջ և վարումէ առենադպրի պաշտօն: 1747 թ. ընտրվումէ Պէնսիլվանիա պղպային ժողովի պատգամաւոր: Նա իւր արտօնութիւնից օգուտ քաղելով՝ համազում է ժողովին գէպի գործնէութիւն—ուշ դարձնել ազգային լուսաւորութեան վերայ, հիմել ուսումնարաններ, հիւանդանոցներ. և և նոյն ժամանակը նա ջանասիրաւթեամբ պարապում է և դիտութիւններով. շատ օգտակար զիւտեր է անում ելքարական զօրութեան վերաբերեալ և հնարում է կայծակնառ (գրոմօոտ- ածու): 1753 թ., նա ստանում է Հիւսիսային Ամերիկայի փոստի զինաւոր կառավարչի պաշտօն. իսկ 1757 թ. նա ու-

զարկվում է Լոնդօն իւր հայրենակիցների իրաւոնքները պաշտպանելու նպատակաւ: Այս դժուար և ծանր յանձնարարութեան ժամանակ, 1765 թ. նրան յաջողվում է պաշտպանել կօլօնիայի (գաղթականների) մի քանի իրաւոնքները. նրա հաստատ փաստերին և ազգացոյցներին նայելով Անգլիական պարլամենտը (արգարագասութեան դադարանը) փոխում է գրոշմաթղթերի մաքսի վերաբերեալ անարդար վճիռը: 1775 թ. Անգլիայի և Հ. Ամերիկայի մէջ ծագած երկպառակութիւնները վերջացնելուց յետոյ, Փրանգլինը յետ է դառնում Լոնդօնից և իսկըն Պէնսիլվանիա պատգամաւոր է ընդուվում Կօնգրէսին (ընդհանուր քաղաքական ժողովին), Կօնգրէսում նա մեծ ջանքով աշխատում է գաղթականների պատութեան համար: 1776 թ. Բ. Փրանգլինը գաղտնի յանձնարարութեամբ ուղարկվում է Ֆրանսիայ— օգնութիւն նադիրել Առարկեալու

XIVից: **Փարբեկումնեան ընդունեցին շատ մեծ յարգանքով,** 1778 թ. նա հասաւ իւր նպատակին, որի համար աշխատում էր:

**1783 թ. Բ. Փրանդլինը ստորագրում է իւր հայրենիքի անկախութեան դաշնագրութիւնը:** 1785 թ. նա յետ է դառնուում Ամերիկայ: Յետ դառնալուց ժողովուրդը ընդունում է նրան մեծ հանդիսով և պատուով և իսկոյն նշանակում է Պէնսիլվանի նահանգի նախագահ:

**1788 թ. Բ. Փրանդլինը թողնում է տէրութեան ծառայութիւնը,** իսկ 1790 թ., նա մեռնումէ:

Բ. Փրանդլինը մի նշանաւոր քաղաքացի մի և նոյն ժամանակ խոհագետ, ուսումնական և վերին աստիճանի բարոյական մարդ էր: Նրա միակ ձգտումն էր հաստատմութեամբ և անընդհատ աշխատելով ժողովրդի բոլոր թշուառութիւնների առաջն առնել: Բացի սրանից նա բարոյա-

պէս մեծ ներգործութիւն ունեցաւ իւր հայրենակիցների վերայ և մեծ զարկ առւա ազգոյն զբականութեանը, որոնցից ամենանշանաւոր տեղը բռնումն այս մեր թարգմանած «Փորձտոռու Իշարի խրառները»:

**Այս զլքոյկի առաջին տպագրութիւնը եղաւ Ամերիկայում 1732 թ. իրեւ յաւելուած իւր օրացոյցի,** որոնեղ 25 տարի շարունակ տպագրվում էր: Փրանդլինը՝ նկատի ունենալով, որ օգացյցները շատ են տարածվում մինչև անդամ և հասարակ ժողովովի մէջ, որոնք ընթերցանուած էաւ համար նա իւր օրացոյցը հարատացնում էր այնպիսի բարոյական խրառներով: (\*) Փրանդլինը գլխաւորապէս ուշ էր

(\*) Արդարեւ օրացոյցների միջնորդութեամբ, որոնք այսպիսի կեղեցիկ խրառներ են բովանդակում, կարելի է մի մեծ զարկ տալ և մեր հասարակ ժողովրդին, որոնց մէջ իւրաքանչյուր տարի մի քանի հազար

դարձնում և զրգում ժողովրդին դէսի  
աշխատասիրութիւն և ինսյովութիւն,  
ինչպէս ամենալաւ միջոց ժողովրդի բա-  
րեկեցութեան և առաքինութեան: Այս-  
պիսի բարոյական առակներից (ինչպէս կը-  
անեմէք զրքոյկիս մէջ) էր բաղկանում  
նրա օրացոյցը գեռ 1732 թ. Այս զրքոյկը՝  
Փորձառու Ռիշտրի խրատները լնդհան-  
րացաւ ժողովրդի մէջ և մեծ ներգործու-  
թիւն ունեցաւ նրանց վերայ: Այն ժամա-  
նակուայ ամերիկական և անգլիական բո-  
լոր լրագիրները ամբողջապէս տպագրեցին  
այս գրքոյկը իրանց թերթերում: Մի և  
նոյն ժամանակ Փրանսիայում լոյս տե-

օրինակ տարածվում է: — նետեարար կարելի է շար-  
ժեր նրանց դէսի ընկերցասիրութիւն: Բայց ցաւերով  
ոլոր է ասել, ի՞նչ բաներ են բովանդակում մեր օրա-  
ցոյցները...., նրանք բայց եկեղեցական չըր ու ցա-  
մոր տօներից ոչինչ նոր նիւթ չեն առաջարկում լն-  
դերցողներին: Մի բանիւր փորձ փորձեցին եւ այն  
միայն անհոռնի յաւելուածներով լրցրին թերթերը:

սան մի քանի թարգմանութիւններ, և ժո-  
ղովրդի մէջ շատ տարածելու համար աշ-  
խատում էին թէ հոգեոր և թէ մարմնա-  
որ կառավարութիւնները:

Փրանդլինի համառօտ կինաագրութիւնը  
տպագրում էր 1871 թ. «Արուրատ ամ-  
սագրում» Նատ հաւանական է, որա առան-  
ձին տպագրուած լինի: (\*) Խորհուրդ կը-

(\*) Թէ եւ Ա. Էջմիածնայ տպարանը իւր զօյս թեսան  
օրից յեայ մի անպիսի ժողովրդական գիրը չէ տպա-  
գրել, այլ միշտ աստուածարանական, պատմական —  
մասնագիտական, բայց զարմանումներ, թէ լնջո՞ւ ի-  
րանց ունեցած տպագրութիւնները ամբողջապէս պահ-  
պանում են լուցերի մէջ, ինչո՞ւ չեն ուղարկում Թիվի-  
լիգու հայ գրավաճառներին կամ իրանց գործակալնե-  
րի միջնորդութեամբ չեն աշխատում տարածել մեր  
ժողովրդի մէջ. Հայ հասարակութիւնը այնքան զար-  
գացած չէ, որ պրեբի արժանա որութիւնները եւ նր-  
րանց կրթողական նշանակութիւնը ճանաչի յայտարա-  
րութիւններից:.... Հայը մինչեւ ացով չէ սենուու եւ  
ծեռով չէ շոշափում, ոչ մի բանի ծեռնամոխ չէ լի-  
նում: Ուրեմն եւ Ա. Էջմիածնում տպագրուած զըր-

# X

տայինք ամենքին կարդալու այս խռհեմ,  
հաստատակամ և հանճարաւոր մարդոյ  
կենսագրութիւնը, որից կարելի է կեան-  
քի դասեր առնել:

Թագավորութ:

«Եթէ մէկը ձեզ ասի, թէ  
կարելի է հարստանալ առանց  
աշխատանքի և խնայողութեան,  
միք հաւատալ նրան. — նա  
թունաւորիչ է:»

Ա. Փառագլուհ:

---

բերը ամբողջապէս խցերումն կ'մնան, բանի որ այս  
կերպով կը վարուին. կամ աւելի լաւ ասել, չ'են առա-  
ջարկել մի հայի, որ իւր խաթ թի համար հայերէն  
դիրք առնէ:

Փորձառու Ռիշարի խրատները

կամ

Հարստանալու Ճանապարհ

Համաձայնեցէք, սիրելի կարդացողներ,  
որ ոչինչ բան այնքան ախորժելի չէ կա-  
րող լինել մի հեղինակի, որքան հանդիպելն  
ուրիշի շարադրութեան կամ քարոզի մէջ  
իւր սեպհական գաղափարների հակումն  
ունենալն և մատնանիշ անելն: Այս պատ-  
ճառով դուք կարող եք եղածացնել, թէ  
որքան ես բաղդաւոր էի զգում ինձ ակա-  
նատես լինելով այն անցքին, որը մոտիր  
և մ ձեզ պատմել:

Ո՞ի քանի օր սրանից առաջ ես անց-  
նում էի մի խումբ մարդկանց միջով. կան-

զնացնելով իմ ձին, տեղեկացայ, որ այդ  
մարդիկը ժողովուել են աճրտախօսութեան  
(աօրդի) նպատակաւ։ Աճրտախօսութիւնը  
դեռ չ'սկսուած, նրանք վիճում էին գա-  
նալան հարցերի։ զիաւորապէս ներկայ  
ժամանակիս գժուարութիւնների վերայ։

Վերկոյ գտնուողներից մէկը, մօտենա-  
լով մի պատշաճ հագնուած ծերունու՝  
ասաց εլնչ՝ էք կարծում գուք, հայրիկ,  
ներկայ ժամանակիս վերայ. ճշմարիտ չէ՞,  
որ ծանր հարկերը բոլորովին քանդում են  
մեր երկիրը և մենք գժուարանում ենք  
վճարել գուք փորձուած մարդ էք. ինչ՝  
խորհուրդ կըտաք սրա առաջն առնելու  
համար։

Օերունին փոքր ինչ մտածելուց յե-  
տոյ պատասխանեց. եթէ այդ մասին գուք  
ցանկանում էք իմանալ իմ կարծիքը, ես  
կասեմ ձեղ կարծ խօսքերով, ինչպէս և  
առում է Փորձառու Իշարը ռճշտրութեանը  
շորտիօսութեան չէ կորուս

Եյս տեղ խումբը շրջապատեց ծերու-  
նուն, խնդրելով, որ նա բացադրի, և նա  
շարունակեց։

«Չեր բողոքը իրաւացի է. իմ բարեկամ  
ներ, ճշմարիտ, որ հարկերը ծանր են.  
միայն եթէ մենք վճարէինք այնքան, որ-  
քան կառավարութիւնն է պահանջում,  
այն ժամանակը, գոնէ, կարելի էր մի կեր-  
պով հեշտացնել գժուարութիւնները, բայց  
կան և այնպիսի հարկեր, որոնք սաստիկ  
ծանր են մեզանից շատերի համար. զորորի-  
նակ. մենք վճարում ենք երկու անգամ՝  
շատ մեր ծուլութեանը, երեք անգամ՝  
մեր հպարտութեանը, չորս անգամ՝ մեր  
անխոհեմութեանը. այս հարկերի համար  
չ'ենք կարող պահանջել ոչ ժամանակ և  
ոչ չափաւորութիւն. բայց յուսահատել  
հարկաւոր չէ, եթէ մենք կը հետեւնք փոր-  
ձառու Ոիշարի խրաներին։ Ողնիր քեզ  
դու ինքդ.ա ասում էր նա, և Աստուած էլ  
քեզ կօգնիւ Ուրեմն լաւցէք։

I) Ո՞ի որ և իցէ կառավարութիւն եթէ  
պահանջում է իւր հպատակներից իրանց  
ժամանակի մէկ տասներորդ մասն, այդ  
մէնք անարդարութիւն ենք համարում,  
բայց մէնք մեր ծուլութիւնով աւելի շատ  
ժամանակ ենք կորսնում: Պարագութիւննեց  
առաջանումնեն շատ հիւանդութիւններ,  
որոնք կարգայնումնեն մարդուս կեանքը:  
Պարապութիւնը ժամանդից աւելի է ուսում  
մարդուն, քան թէ դործը:

Քանալիքը փայլում է, քանի որ նա  
զործածութեան մէջն է զտնվում: ասում  
էր փորձառու Իիշարը:

Եթէ դուք սիրում եք կեանքը՝ աւե-  
լոցքեց նա, ուղեմն միք կարսնիլ ժամա-  
նակը. նա մէկ թելէ, որից բաղկանում է  
մեր կեանքը: Ուրքան աւելորդ ժամանակ  
ենք կորսնում մենք, մոռանալով, որ քը-  
նոծ աղուէսը հաւ չէ բռնում, և թէ  
մէնք երկար ժամանակ կունենանք քնելու  
գելեզմանի մէջ:

Եթէ ժամանակը մի ամենաթանգա-  
գին գանձ է, ուրեմն նրան կորսնել կը-  
նշանակէ անձնատուր լինել անմերելի շռայ-  
լութեան: Կորսրած ժամանակն էլ չէ վե-  
րադառնում: որքան էլ նա շատ լինի մեզ  
քիչ կ'երենայ:

Ուրեմն զէսի զործ: Եթէ սկսենք ջա-  
նասիրութեամբ գործել, շատ բան կըշե-  
նենք փոքր աշխատանքով: Գործունեայ  
մարդոյ համար աշխատանքը (փիզիկապէս)  
զգալի չէ:

«Պարապութեան սովորութիւնը բոլոր  
զբաղմունքը ծանրացնում է. իսկ աշխա-  
տանքինը՝ թիթեացնում: Ով ուշ է արթ  
նանում քնից, նա իւր բալոր օրն անց է  
կացնում պարապութեան մէջ, իսկ երե-  
կոյեան սկսում է աշխատել: Ծուլութիւնն  
այնպէս կամաց է քայլում, որ աշխատու-  
թիւնը շուտով է համում քամակից:  
Դու ինքդ հարկադրի՞ր քո դործերին մի  
սպասիր, որ նա քեզ հարկադրի: Վաղ

արթնացիր, վաղ քնիլ, կըլինես առողջ,  
հարուստ, միշտ պարզ մաքով և դուարթ  
գէքովլ։» Այս բոլորն նոյնպէս փորձառու  
թշարի խօսքերն են։

Եւ արդարեւ. ինչ կընշանակէ անկա-  
դար սպասել և յուսալ մի յաջող ժամա-  
նակի, քանի որ մեր ապագան մեր սեպ-  
հական ձեռքին է։ Հարկաւոր է գործել,  
ոչ թէ երեակայել և յուսալ. ով միայն  
յուսով է ապրում, նա կը մեռնի քաղծա-  
ծութիւնից. առանց աշխատանքի մարդ  
չէ վարձատրվում։ Եթէ դու մի կաոր հող  
ունիս թէ ոչ, մի և նոյն է. դու պէտք է  
աշխատես. իսկ եթէ ունիս և գործ չը  
դնես քո աշխատանքը նրան մշակելու, այն  
ժամանակ նա կանցնի հարկահանի կամ  
պարտատիրոջ ձեռքը։ Ամեն մի արհեստ  
և ամեն մի տեսակ կանօնաւոր պարապ-  
մունք մի անսպառ աղքիւր է, որից բըլ-  
խում է օգուտ և յարգանք. բայց պէտք է  
և հետեւել մի որոշ նպատակի, առանց

որոյ իզուր կըկորչեն մեր բոլոր աշխա-  
տանքը։ Եթէ մենք աշխատասէր ենք եր-  
բէք չըպէտք է վախենանք անյաջողու-  
թիւններից. որովհետեւ սովոր նայում է  
միայն աշխատաւորի բնակարանին, բայց  
չէ համարձակվում ներս սոված. նոյնպէս  
ներս չէ մտնում աշխատաւորի բնակարանը  
ոչ պարտատէրը և ոչ ոսահիկանութիւնը։  
Պատճառն շատ պարզ է, աշխատանքը մար-  
դուն տալիսէ կարողութիւն վճարելու  
իւր պարտքերը. իսկ հակառակ գէպքում,  
ծուլութիւնը և յուսահատութիւնը բազ-  
մապատկում են իւր պարտքերի քանա-  
կութիւնը,

Մի յուսաք, որ գանձ կըդանէք, կամ  
ժամանակաւ ժառանգութիւն կըստանաք.  
աշխատանքի Ճիշտ հետեւ անքը՝ երջանկու-  
թիւնն է. Աստուած էլ է օդնում աշխա-  
տաւորին։ Ուրեմն աշխատեցէք անդադար  
և այն միջոցում, երբ շատերն իրանց նու-  
իրել են քնին. դուք զբարձալի կերպով

բաւականութիւն կըստանաք և առատ կը վարձատրուիք: — Տաօրուայ գործերն հէնց էս օր վերջացրէք, որովհետեւ չէք կարող իմանալ թէ վաղը ինչ կըստահի, «Մէկ էս օրը» ասում է փորձաւու Ռիշարը, «արժէ երկու էգուցուայ. էս օրուայ գործըն վաղուան միք ձգել, քանի որ կարող էք էս օր կատարել»

Եթէ գուք մի բարի մարդոյ ծառայ լինէք, իշարկէ ձեզ համար ամօթ կըլինէք, եթէ նա միշտ տեսնէք ձեզ պարապութեան մէջ: Գուք բոլորիքեանքդ ձեր ծառամերն էք. ամսէցէք ուրեմն ձեզանից ձեր պարապութեան պառճառուաւ ամսէց ցէք նոյնպէս ձեռքներդ ծալած նատել, երբ գուք շատ գործեր ունիք թէ ձեր սեփհական, թէ ընտանեկան և թէ հայրենիքի վերաբերեալ: Միք արհամարհիլ աշխատանքը, ինչ տեսակ էլ օր նա լինի. միք պահպանիլ ձեր ձեռքերը անդործածութեան մէջ, անխոնջ աշխատանքով պա-

րապեցէք ձեր գործերով, ևմիք մնուանալ որ կատուն ձեռնոցներով մնուի չէ բանում:

Ճշմարիտ է, որ այս շատ հեշտ բան չէ և կարելի է, որ ձեր ոյժն աւելի թոյլ է, իսկ ձեր ձեռքերն անսովոր են աշխատելու. բայց միք յուսահատուիլ. Հաստատ յուսով հրաշքներ կը գործէք. Ժամանակը յաղթում է բոլորին, — Չուրը կաթելով ծակում է քարը. — մռմը կը ծելով կտրում է հաստ պարանը. — կայնի թոյլ հարուածից գլորվում են գարեւոր կաղնիները:

Մի քանիսը, գուցէ հարցն ն. «մի թէ մարդ մի բոսէ ըսպէտքէ հանգստանայ.» Նրանց կըստախանեմ դարձեալ փորձառու Ռիշարի խօսքերով. «իմացիր ժամանակի գործածութիւնը ինչպէս հարկն է, եթէ կամենում ես հանգստութիւն վայելել. և որովհետեւ գուք չէք կարող պատասխանել ձեր կեանքի ընթացքում կոր-

ցրած ամեն մի վայրկեանի համար, ուրեմն  
մէք կորսնիլ և ոչ մի ժաման Մի աղատ  
լոպէռում գուք կարող էք մի օգաակար  
բան շինել: Գործունեայ մարզը միշտ դորձ  
կը գտնի, իսկ ծոյլը և ոչ մի ժամանակ.  
որովհեան աշխատասիրի հանգստութեան  
և ծոյլի կեանքի մէջ մէծ տարբերութիւն  
կայ: Նատերը կացանկանային ապրել հան-  
գատութեան մէջ, առանց ոչինչ աշխա-  
տանքի. այսպէս մտածողները, անկատած,  
կը կործանուին. ընդ հակառակը աշխա-  
տանքը տալիս է մարդուս հարստութիւն,  
բաւականութիւն, առատ եկամուտք և  
ընդհանուր յարգութիւն: Հեռացէք զու-  
արձութիւններից նրանք իրանք ձեր յե-  
տից կը վազին: — Փութաջան գեղջկու-  
հուն ոչինչ պակասութիւն չունի, ընա-  
յելով, որ նրա հագուստը կայանում է հա-  
սարակ կտաւեց. նա ապրում է առատու-  
թեան մէջ, և բոլորն նրան յարգանքով  
գլուխ են խոնարհեցնում:

II) Բացի աշխատասիրութիւնը, մեզ  
հարկաւոր է և հասպատաճութիւն ան-  
դադար ուշադրութիւն դարձնել մեր գոր-  
ծերին և միշտ վերահասու լինել Բնակու-  
թեան տեղը շուտ շուտ փոխելով՝ նոյնպէս  
չ'ը կարող երջանիկ ապրել — երեք ան-  
գամ տնափոխութեան ծախքը հաւասար է  
մի հրդեհից առաջացած վնասի:

Ո՞ւր փորձառու Ռիշարը ասում է, «բա-  
րի եղի՛ր զէպի ուրիշները, փոխարէնը կը-  
ստանաս. եթէ ցանկանու՞մ ես, որ քո բո-  
լոր գործերը ճշտութեամբ կատարուին,  
այն ժամանակը պարտաւոր ես գու ինքդ  
անես, կամ վերահասու լինես նրանց կա-  
տարողների վերայ. իսկ եթէ կուզարկես  
մշակներին և գու ինքդ վերահասու չե՞ս  
լինել նրանք ոչին չեն շինել Ով ցանկա-  
նում է երկրագործութեամբ պարապելով  
հարստանալ, նա պէտք է փոքր իշատէ  
հասկացողութիւն ունինայ այդ մասին. և  
պարտական է նոյն իսկ ինքն մշակել (կա-

ռավարել՝ կամ վերահասու լինել։ Նատ անգամ փերահայեցողութեամբ աւելի շատ բան է շինվում, քան թէ ձեսներով և շատ անգամ անհոգացողութրամբ բացակայ լինելն աւելի է վեսառում մարդուն, քան թէ տղիտութիւնը։ Վերահասու չը լինել իւր ծառաների և մշակների գործերին, կընշանակէ առաջարկել իւր փողերի քսակը նրանց անօրէնութէանը։

Ներկայ ժամանակում, քանի որ մարդիկ հաւասարապէս չեն զարգացած, շատ անգամ մէկի շափականց հաւասարմութիւնն ենթարկում է իրան գժբաղացութեանը. իսկ անհաւատարմութիւնը՝ աղասում է։ Զանասէր մարդը շատ սղուցներ է քաղլում. եթէ ձեզ ցանկալի է ունենալ հաւատարիմ և հնապանդ ծառաներ, ծառայեցէք ձեզ դուք ինքներդ։ (\*)

(\*) Այս ասելով պատուելի նեղինակը չէ մերժում ծառաներ ունենալն, կամ չէ ուզում ասել, որ ծառաները բոլորն ել լինում են անհաւատարիմ եւ անհնա-

գամ ամենաշնչին պատճառներից ծնվում են գժբաղացութիւններ։ — Պայտից (նալից) վեր է լինինում մէխը, դուք նրան կորմնում էք. բայց առանց պայտի վնասվում է ձին, իսկ առանց ձիուն՝ ձիտորը, որի քամակից թշնամին հանելով սպանում է նրան։ Բայց ինչ էր էս բոլորի պատճառն. ձիաւորի անհոգութիւնը, որ ուշ չէ գարձրեց պայտից վեր ընկնելս մէխին։

III) Կմ բարեկամներ! կարծեմ ես բաւական երկար խօսեցի աշխատասիրութեան և գործունէութեան վերայ. ցանկալի է ինձ մի քանի խօսք ասել և ենայդութեան վերայ, որը մի և նոյն աստիճանի հարկաւոր է. եթէ մենք ցանկանում ենք մեր աշխատանքի պառուղներն լիովին վայելել Այն մարդը, որ իւր եկամուտքից մի մասը չըպահպանէ նեղ օրուայ համար, նա իւր բոլոր կեանքի ընթացքում աղքատութեան

զանդ. այլ թէ իւրաքանչիւր մարդ պարտականէ տնտես լինել

մէջ կապրի և կըմեռնի առանց մի քանի  
կոպէկ ժառանգներին թողնելու։ Ով սո-  
վոր է ուտել գէր պատառը, նա լլ. ըլ չէ  
սիրել։ — Հասարակութեան մեծ մասը աղ-  
քատութեան ճանապարը ընկաւ այն ժա-  
մանակից, երբ կանայքը տնային տնտե-  
սական գործերը թողացին և ճահարկն  
ու ոստայնանկը փոխարինեցին թէյի և  
նոր մօղաների։ իսկ մարդիկը՝ խօփն ու  
արօրն — արաղի։ Եթէ ցանկանում էք  
հարստանալ սովորեցէք, գոնէ, յետ ձգել  
ձեր եկամուտքից մի ամենափոքր մասը։ —  
որքան եկամուտք ունիք, բոլորն միք մըս-  
իւիլ այլ ձեր ծախսերը այնպէս չափառ-  
րեցէք, որ եկամուտքից չաւելանայ։

Թողէք ձեր հարուստ հագուստները,  
շուտով կրտեսնէք, որ էլ չէք տրանջալ  
ոչ ժամանակի գժուարութեան, ոչ հար-  
կերի ծանրութեան և ոչ էլ տնային շատ  
և զանազան ծախսերի վերայ։ «Թղթա-  
խաղն, արբեցողութիւնն և անտնտես

կանայքը մարդոյ բոլոր հարստութիւնը  
հաւասարացնում են զօյի (ո՞նչի) և բազ-  
մազատկում են կարիքների և պարտքերի  
թիւն և այս կերպով դիմում են դէպի  
յանցանք։» աւելացնում է փորձառու Ռի-  
շարը. «Ուրսոյ յիշեալ յանցանքներից մէկին  
հետեւելին, աւելի թանգ է նստում մար-  
դուն, քան թէ երկու որբ երեխայի ու-  
ննդելու»

Դուք, շատ կարելի է, կարծում էք,  
որ մի փոքր քանակութեաւը թէյ, մի  
քան բաժակ զինին, երբեմն մի աւելորդ  
բաժին կերակուրը, գեղեցիկ հագուստը,  
ձեր բարեկամներին հետ կառքերով շրջա-  
կայելն ոչինչ գժբաղսութիւն չ'են սրտ-  
առիկ. բայց մի մոռնեաք, որ փոքր աղ-  
բիւրներիցն է գոյանում մեծ գետերը։  
Պահպանեցէք ձեղ մանր ծախսերից. շատ  
անդամ ահազին նաւի փոքր պատառուած-  
քից կործանվում է ամբողջ նաւն։ — Քմա-  
սէլները աղքատանում են։ — յիմարները

ինջոյքներ են պատրաստում, իսկ խորաշմանկերը նրանց ծախսով կշտանում:

Դուք, աշա զորօրինակ, հաւաքուել էք այստեղ նրա համար, որ առնէք որպիսի և իցէ մի չնչին բան, և այդ շատ բարի և լաւ բան էք կարծում, այն ինչ ձեր բարի կարծած բաները շատերիդ համար կարող է դժբաղառութիւն պատճաժել:

Դուք համեմատելով աճրով վաճառուելիս ապրանքի գները վաճառանոցի գների հետ, կրտսենէք, որ արդարեւ աճրգախօսութեան ժամանակ շատ էժան է վաճառվում, և դուք այս բանով գրաւուելով կը գնէք շատ չնչին բաներ. բայց որովհետեւ զրանք անպէտք և աւելորդ բաներ են, ուստի և բոլորովին աւելորդ է գնելն: Մի մոռանաք փարձառու Ծիշարի խօսքը, «Եթէ սկսես անպէտք բաներ գնել շուտով կը վաճառես պիտանիները»: Նա խորհուրդ է տալիս բոլորովին զգուշանալ էժանութիւ-

նից, որովհետեւ շատ անգամ գրաւուելով էժանութեանը՝ առնում ենք այնպիսի բաներ, սրոնք բոլորովին մեղ հարկաւոր չեն. սրանով մենք միայն թեթևացնում ու գարտակում ենք մեր գրպանը և աւելի վեստ ենք ստանում քան թէ օգուտ: Նատերը այսպիսի էժան բաներ առնելով՝ ունանկանում են: «Մի՞՛թէ յիմարութիւն չէ ասում է Ծիշարը, «որ մարդս իւր կոպոկներով աշխատած փողերը վճարի այսպիսի անպէտք բաների, կամ աւելի լաւն ասել ցաւի» Քիչ օրինակներ չենք տեսնում: շատերը զբկում են իրանց ամենահարկաւոր կարիքներից, միայն նրա համար, որ իրանց կանանցը զարգարեն նորաձեւ հագուստով. այս նպատակի համար, շատերը մինչեւ անգամ քաղծած են թողնում իրանց ընտանիքը: «Մախմուրը, ատլասը և շատ այսպիսի թանգարին բաներ հանգցնում են վառարանի կրակը. (քանի ում են մարդոյ տուն, )» ասում է փողձառու Ծի-

շարը: Եւ չընայելով, որ այդ բոլորի կարիքը զգալի է, և մինչեւ անգամ մի առանձին յարմարութիւն էլ չէ տալիս: Այս կերպով միայն միմիշարվում են թեթևամիտ մարդիկը, որոնք զմայլելով իրանց կանանց թանգագին շրերի փայլմանքից, աշխատում են հաւատացնել իրանց, որ այդ բոլորն անպատճառ հարկաւոր է: Այսպիսի անխոհեմութիւնից մարդիկ, (շատ անգամ և զարգացած դասից) հասնում են աղքատութեան վերջի կետին: Հարկադրվում են պարտք տռնել այնպիսի մարդկանցից, որոնք իրանցից նիւթեկանութեամբ շատ ստոր վլաճակում էին, բայց ապահովացրել են իրանց դրութիւնը աշխատասիրութեամբ և խնայողութեամբ. այս հաստատում է նոյն փորձառու. Ոիշարի հետեւալ խօսքերը՝ «ոտների վերայ կանգնած զիւղացին աւելի բարձր ու յարգելի է այն ավելուականից, որ սողում է ծնկների վերայ» Նթէ մի քանիսը պատահմում

մի փոքր ժառանգութիւն են ստանում, «այժմ մեր բարեկենդանն է» ասում են. «Էլ այսուհետեւ պաս չի կարող լինիլ. — կամ մի՞թէ նչեն ծախսերո մեզ կըքանդեն:» Բայց այդպիսի պարզամիտները մռանում են, որ խաշամանից անդադար հանելով խաշը (տխտմբը) և ոչինչ չտւելացնելով նրա վերայ, շուտով կարող ենք հասնել յատակին: — կամ թէ ջրի զինը այն ժամանակ միայն կարող ենք իմանալ. երբ մեր ջրհորը կըցամքի— և փողի գինը այն ժամանակ՝ երբ պարտաւորուած կըլինինք փոխ առնել: Ով սովոր է պարտք առնելու, նրա կեանքը միշտ ենթարկում է անհանգստութեան և վտանգի: Նատ անգամ է պատահում, երբ պարտահերերը որոշեալ ժամանակին ցանկանում են յետ ստանալ իրանց փողերը, հազար ու մեկ անբաւականութիւններ են լսում իրանց պարապաններից: «Արտաքին շքեղութիւնը, իսկապէս զժբաղդութիւն է.

մարդու երբէք անձնատուր չըպիտի լինի  
այսպիսի հաճոյքների, առանց առաջուց  
իմանալու իւր զրապանի դրաւթիւնը: «Հե-  
ղարքու-Եկեղէ» ասում է փորձառու Իի-  
շարը «աղքատութիւն է, որը նոյնպէս  
բարձր է գոռում, ինչպէս կարիքը. միայն  
զանազանութիւնը նրանումն է, որ առա-  
ջնին ձայնը աւելի յանդուգն է.» Դիցուք  
թէ գուք առել եք մէկ լաւ բան. բայց  
մի և նոյն ժամանակը հարկաւոր է նրա  
հետ ուրիշ շատ բաներ. հարկաւոր է  
պահպանել առաջին ցանկութիւնը, որով  
հետեւ այս շատ հետ է մերժելը, քան թէ  
հետեւ կատարելու առաջին ցանկութիւ-  
նից առաջանալու պահանջները: Այն աղ-  
քատը, որ հետեւում է հարատին, նման է  
գորտի, որ ցանկանում է մեծութեամբ հա-  
ւասարուիլ ցուլի: Մի՛ մոռանաք առաջը.  
«ոտք վերմակիդ (եօրդանիդ) համեմատ  
մէինի րո»

Երնու ամենայնիւ այսպիսի անմիտ

մարդիկը անպատիժ չ'են մնում. եթէ  
նրանցից մէկը իւր արտաքին շքեղութեամբ  
հանդիսանում է մի հասարակութեան մէջ,  
բոլոր յարգում են նրան, կարծելով» որ  
նրա ներքին յատկութիւնները ևս նոյնպէս  
շքեղ են. բայց երբ փոքր ի շատէ ծանօ-  
թանում են նրա գաղտնարի հետ, հեռա-  
նում են. իսկ երբ բոլորովին ձննաչում են  
նրան և համեմատելով նրա ներքին զգաց-  
մունքը արտաքին շքեղութեան հետ, ար-  
համարհանքով են նայում նրա վերայ և  
մերժում են իրանց հետ յարաբերութիւն  
ունենալուց: Այս միայն մի լոկ ցանկու-  
թեան հետեւանք է:— Եւ արգարե ի՞նչ  
օգուտ ենք ստանում այն յանկութիւնից,  
որը միայն մեզ ցցց տալու համար ենք  
ծնում և որի պատճառաւ անչափ դրժ-  
ուարութիւններ ենք կրում. կազդուրում  
է նա, արդեօք, մեր վատ առողջութիւնը.  
կամ միիթարում է մեր գիշաղութեան  
ժամանակը և կամ աւելացնում է, արդեօք  
փոքր ինչ մեր համարութիւն,

Ու նա միայն շարժում է մեղ դէպի  
նախանձ և շտագեցնում է մեր կորուստը:

Ուրեմն ասացէք լինդրիմ; յիմարու-  
թիւն չէ, այսպիսի չնչին նպատակների  
համար պարտքերի տակ ընկնելը:

Դիցուք թէ մի խանութում առաջար-  
կում են ձեզ ասլիանք և 6 ամիս ժամա-  
նակ են տալիս ձեր պարաքի վճարելուն:  
Մարդուս նեղ դրութիւնը շատ անդամ  
իրաւունք է տալիս իրան օգուտ քաղել  
յարմար առկթից—հագնուիլ առանց փո-  
ղի: Իսկ դուք շատ գոհ էք լինում... Բայց  
մտածեցէք, թէ ինչ կըլինի հետեանքը.  
դուք ձգեցիք ձեր ազատութիւնը ուրիշ-  
ների իշխանութեան տակ, նթէ դուք ո-  
րոշեալ ժամանակին չըվճարէք ձեր պարտ-  
քը, պէտք է ամաչէք ձեր պարտատի-  
րոջ հանդիպէլիս և շատ կարելի է, մին-  
չեւ անդամ, դողաք. կըսկսէք անդադար  
մտածել և խղճահարուիլ. փոքր առ փոքր  
կըսոլորէք սուտ խօսել և կընկնէք ստա-

խօսութեան փշոտ և զբուելի ճանապարհը:  
«Ստախօսութիւնը ասում է փ. Թիշարը.  
մերկրորդ աստիճանի յանցանք է. իսկ  
պարտքերի մէջ մանելը՝ առաջին:» «Ստա-  
խօսութիւնը շըջում է պարտքերի հետ  
ձեռք ձեռքի տուած, աւելացնում է նա:

Մարդս ազտտ ծնուելով, ըսպէտքէ և  
ոչ մի ժամանակ ենթարկի իւր ազատու-  
թիւնը ուրիշների իրաւանցը, կարմիրի կամ  
դողայ նրանց առաջեւ. բայց շատ անդամ  
նրա սկսած գործերի ընթացքը տանում  
է իրան դէպի աղքատութիւն և ոչնչա-  
ցնում է նրա բոլոր ավնիւ զգացմունքնե-  
րը: «Դագարի քուրձը (չուալը) դժվա-  
րութեամբ կըկանգնի:»— Ի՞նչ կ'ասէիք  
դուք այն մարդկանց, որոնք առանց պատ-  
ճառի արգելէին ձեղ հագնուիլ մի հա-  
րուստ պարոնի կամ տիկնոջ նման, ասե-  
լով որ ձեզ կըստուժենք և բանդ կըձգենք:  
Դուք, անկասկած, կըպատասխանէիք, որ  
մենք ազատ ենք և իրաւունք ունինք

Հազնուելու, ինչպէս և կըկամնանք և  
թէ, այդպիսի արդելք չեն կարող լինել  
ինքնակառավարութեան դէմ: Ահա, մի  
խնդիր, որը գուք չ'էք ցանկանում հաս-  
կանալ թէ այն օրից, երբ ձեզ իրաւունք  
էք տալիս պարտքերի տակ ընկնել ձեր  
աղատ կամքով ստորացնում էք ձեր ինք-  
նասիրութիւնը, միայն նրա համար, որ  
շռայլութեամբ և արտաքին շքեղութեամբ  
փայլիք: Ձեր պարտատէրը լիակատար ի-  
րաւունք ունի զրկել ձեզ ձեր բոլոր ազա-  
տութիւնից և բանդ ձգել տալ, կամ պա-  
հանջել որ ծախեն ձեր բոլոր ստացուած-  
քը, եթէ դուք ժամանակին չ'էք վճարիլ  
ձեր պարտքերը:

Երբ դուք պարտք էք վերառնում,  
վճարելու օրն ձեզ շատ հեռու է թվում,  
բայց ժամանակը շատ շուտ է անցնում:  
իսկ պարտատիրոջ յիշողութիւնը այս մա-  
սին աւելի սուր է, քան թէ պարտապա-  
նինը: Նրանք ժամանակից չ'են թողնիլ

անցնի ոչ մի օր, ոչ մի րոպէ և ոչ մի  
վայրկեան: Քանի որ դուք ձեր տանը նր-  
ստած ուրախութիւն կ'անէք, առանց  
մտածելու պարտքի վճարելու ժամանակի  
վերայ, յանկարծ ձեր պարտատէրը կըծե-  
ծի ձեր դուռը. իսկ եթէ դուք կըմոա-  
ծէք ձեր պարտքի վճարելու ժամանակի  
վերայ, որը սկզբումն ձեզ շատ հեռու էր  
թվում, յանկարծ կըտեսնէք մօտացած:  
Օրերը անցնում են իրար յէտեկց և ժա-  
մանակը թոշնի պէս յառաջ է սլանում:  
«Մէծ պատը շատ կարձ է երեսում այն  
մարդկանց համար, որոնք զատկին վճա-  
րելիք ունին»:

Եթէ դուք գտնվում էք այնպիսի դրու-  
թեան մէջ, որ կարող էք առանց մի քա-  
նի աւելորդ ծախսեր անելու կառավա-  
րուիլ աւելի լաւ կլինէր, եթէ ձեր փո-  
ղերը պահէիք սև օրուայ կամ ծե-  
րութեան ժամանակի համար: Խնչպէս նոր  
ծագելիս արեգակը իւր ճառագայթները

չէ տարածում ամէն տեղ, նոյնպէս և մեր  
բաղզի անիւը շատ անգամ չէ պտտում.  
Մարդոյ եկամուտքը շարունակաբար և հաս-  
տատ չէ լինում. բայց կեանքի պահանջ-  
ները մինչև գերեզմանը ուղեկից է լինում  
նրան։ «Եսատ հեշտ է» ասում է Փ. Ռիշարը,  
«երկու վառարան շնորհ քան թէ մէկ վա-  
ռարանի մէջ միշտ կրակ պահել» աւելա-  
ցնում է նա. «Ղու է առանց ընթրիքի  
քնել, քան թէ զարթնել պարտքով!»—  
Աշխատեցէք, որքան կարող էք և խնայո-  
ղութեամբ գործ գրէք, ինչ որ ունիք. այս  
մէկ օրէնք է, որ անակը ոսկի է դարձնում.  
և եթէ հետեւէք այս օրէնքին, հաւատա-  
ցէք, որ ոչ ձեր կեանքի կարկքները ձեղ  
կըծանրաբեռնեն և ոչ ել ձեր հարկերը  
ձեզ կըվախցնեն։

IV) Աիրելի բարեկամներ, թէ և այս  
բոլորը, ինչ որ ձեղ ասացի, առողջ դա-  
տողութեան և շատ փորձերի արդասիք են,  
բայց դուք միք մասածիլ որ մարդուս

ապրելու համար միայն բաւական է աշ-  
խատանքը, խնայողութիւնը և խոհեմու-  
թիւնը, առանց Աստուծուն փառարանե-  
լու։ Զերմեռանդ սրտով աղօթեցէք Աստու-  
ծուն. խնդրեցէք Նրանից օգնութիւն ձեր  
գործերի համար, և անողորմ միք լինիլ  
գէպի այն մարդիկը, որոնք խսկապէս կա-  
րօտութիւն ունին և կարօտ են ձեր օգ-  
նութեանը. օգնեցէք և միիթարեցէք  
Նրանց միք մոռանալ, չարչարանք կրող  
Յովեին, որի պատմութիւնը գեղեցիկ նկա-  
րագրուած է Աստուծաշունչ գրքում։

Այժմ ցանկանալով հրաժարուիլ ձեզա-  
նից, իմ բարեկամներ, բոլորովին յուսով  
եմ, որ իմ խօսքերը ձայն բաւրառոյ յա-  
նապատի չըհամարէք. Ոկեանքի փորձա-  
ռութիւնները ուսումնարանից բարձր է.  
այստեղ է միակ ուսումնարանը այն ան-  
միտ մարդկանց համար, որոնք, թէ և շատ  
քիչ, բայց այնու ամենայնիւ մէկ բան են  
սովորում։ Իրաւ, որ Ճշմարիտ է Փ. Ռի-

շարի նկատողութիւնները. թէ խորհուրդ  
տալն հեշտ բան է, բայց ստիպել մէկին  
հետեւելու և կատարելու իւր խորհուրդ-  
ները՝ անկարելի. բայց և պէտք է ի նկա-  
տի ունեցած. այն մարդիկը, որոնք  
չեն լսում այսպիսի խորհուրդների, շատ  
անգամ ընկնում են սիստեմաց մէջ. եթէ,  
նրանք չըեն բանականութեան ձայնին.  
շուտովնա իրան կը ծանօթացնի նրանց:

Այս խօսքերից յետոյ ծերը լռեց. Բոլոր  
հանդիսականները ուշադրութեամբ լսում  
էին նրան և նրա ասածներին համակրում:  
բայց նրա հեռանալուց յետոյ բոլորը նրա  
խորհուրդներին ընդգեմ վարուեցին, ինչ-  
պէս որ առհասարակ լինում է իւրաքան-  
չւը քարոզեց յետոյ: — Հրապարակական  
աճրդախօսութիւնը սկսվեց և Իշշարի քա-  
րոզները ուշադրութեամբ լսող և համա-  
կրող պարզմերը իրար զւուխ կոտրելով  
առաջ էին շատապում և վաճառուելիս բու-  
ների գներով աւելացնում:

Ես նկատեցի միայն, որ քարոզելով ուշա-  
դրութեամբ կարդացել էր իմ օրացոյցը և  
ձիգդ ըմբռնել այն բոլոր բարոյական խրառ-  
ները, որոնք ես հաւաքել էի 25 տարուայ  
ընթացքում Այս անընդհատ ծանօթու-  
թիւնները և քաղուածքը գուցէ շատերին  
ձանձրալի լինէր բացի այն հեղինակից,  
որի խրառներից օգուտ է քաղուած: Իմ  
անձնասիրութիւնս բուականին գոհ էր,  
թէ և այդ բոլորի մէկ տասներորդ մասն  
հաղեւ ինձ էր պատկանում: իսկ մնացեալն  
ես իմ աշխատասիրութեամբս սեփհակա-  
նացրել էի ուրիշ փորձառաւ մարդկանց  
քարոզներ լսելով և նրանց շարադրութիւն-  
ները կարդալով: — Ինչ և իցէ ծերունու  
քարոզները մեծ տպաւորութիւն գործեց  
ինձ վերայ և ես նրանից այն օգուտն  
ստացայ, որ, թէ և մասածում էի ինձ հա-  
մար նոր հագուստ առնել այդ աճրդախօ-  
սութեան ժամանակ և հենց այդ նպա-  
տակաւ էլ գնացել էի, բայց մտածեցի, որ

գեռ իմ հին շորերով կարող եմ կառավա-  
րութիւն — ու չառայ:

Նթէ դուք էլ սիրելի կարտացողներ,  
հետեւէք Փորձառու Իիշարի խորհուրդնե-  
րին և աւելորդ ծախսեր չ'անէք, ինչպէս  
և ես չ'արեցի, հաւատացէ՞ք, որ լաւ կը-  
սպալի՞ք:

## ՀԵՐԱՑՄԱՆ ՄԻԹՈՑ

առաջարկութիւն Բ: Փրանդինի  
ԾԵՐ ՄՇԱԿԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ԵՐԻԴԱՍԱՐԳԻՆ

**Միք** մոռանալ, որ ժամանակը ար-  
ծալ է. այն մարդը, որ միջոց ունի աշ-  
խատելու օրեկան երեք մանեթ, նա օր-  
ուայ կեսը պարապութեան մէջ է անցկաց-  
նում, թէ և այդ միջոցում գուցէ նա մի  
քանի կոսկէկից աւել չէ մախել անկասկած,  
նա իրանից շատ գոհ կը կըլինի, որ խոհե-  
մարար է վարուել բայց նա մոռանում է,  
որ չափազանց շատ բան է կողարել — մի  
քանի աղատ ժամեր, որոնց միջոցում նա  
կարող էր աշխատել մէկ ու կէս մանեթ:—  
Միք՝ մոռանալ նոյնպէս, որ հաւատար-  
մաւթիւնը նա արծալ է: Նթէ ձեր պար-  
տատէրը յետաձգում է, ձեր պարտքերի

վճարման ժամանակը, նա դրանով ձեզ  
միջոց չէ տալիս, որ օգուտ քաղէք  
նրանից, նա ի նկատի ունի իւր օգուտը—  
տոկոսը: Սյն մարդը միայն կարող է փող  
աշխատել ողը մեծ կարողութիւն և հա-  
մարումն ունի, մի և նոյն ժամանակը և  
խոհեմութեամբ է բանացնում: Ի նկատի  
ունեցէք, որ փողը մի առանձին յատկու-  
թիւն ունի—ինքն իրան շատանալւ Փողը  
խոհեմաբար բանացնելով շխտում է  
դարձեալ փող, տոկոսիքով տալով բերումէ  
տոկոսիք, — տոկոսիքը դարձեալ տոկոսիք.  
և այսպէս նա շուտով շատանում է: Որ-  
քան դէպի անտառի խորքը գնաս, այնքան  
փայտերը կը շատանան:

Այս կերպով գործ զրած մանէթը դառ-  
նումէ տան մանէթ և անդագար աւելաց-  
նելով տոկոսիքը իրար վերայ, մի քանի  
ժամանակից յետոյ կը դառնայ հարիւրներ:  
Քանի որ այս կերպով մեր փողերը իրար  
վերայ աւելացնելով գործ գնենք, նրանց

շուտով կը բազմապատկենք և մեծ օգուտ  
կըստանանք: Եթէ մէկը մորթում է յղի  
խոզը, նա ոչնչացնում է և նրանից ծնուե-  
լու բոլոր ձագերը: — Ով շուայլաբար ծա-  
խում է, գիցուք, մէկ ոսկի, նա կորսնում է  
այն բոլոր օգուտը, որը կարող էր ստանալ  
նրանից, մինչև անգամ հարիւր ոսկի. Մաս-  
ծեցէք, որ եթէ օրեկան յետ ձգելու լի-  
նիք 15 կոպէկ, կարող էք տարուայ վեր-  
ջում ունենալ 50 մանէթից աւելի: Այս-  
պիսի չնչին գումարները մենք շատ ան-  
գամ անսաեղի կորանում ենք: Ամէն մի մարդ,  
որ փաքը ի շատէ կայուղութիւն ունի, նա  
կարող է միշտ հազար մանէթ դրամազուխ  
5% կամ 6% տոկոսով տալ իհարկէ, կա-  
րելի չէ ամէն մարդոյ խոհմուրդ տալ այս  
անելու, քանի որ գործունեայ մարդոյ ձեռ-  
քին այսքան գումարն կարող է հրաշքներ  
գործել:

Այն մարդը, որ բարեխղճմուաբար է վար-  
վում և իւր վարկը (համարումն) չէ կոտ-

բել նա կարող է իւրաքանչիւր զիսպուածում համարձակ դիմել իւր ծանօթներին և բարեկամներին, նրանցից նիւթական օդնութիւն խնդրելու, եթէ հարկաւոր լինի. բոլորն էլ մեծ ուրախութեամբ կ'օգնեն նրան, քանի որ նրա ճշմարտութիւնը ճանաչում են. — իմ կարծիքով սա փոքր բան չէ: — Ծնաէսաբար աշխատանքից և խնայողութիւնից յետոյ, ամենազլսաւոր տեղը բռնում է ճշուաթեանը. ոչինչ բան այնքան օդուտ չէ կարող տալ մարդուս և այնքան նրա համարումը չէ բարձրացնիլ որքան տուած խօսքը ճշմարտութեամբ կատարելն. — Ճշգութիւն և ազնուութիւն ունեցէք ամէն դործում: Եթէ դուք որոշել էք ձեր պարտքի վճարելու ժամանակն, մի՛ք ուշացնել և ոչ մի ժամ, եթէ ոչ, ձեր բարեկամների գրանը միշտ դադարկ կը գտնէք ձեղ համար, կամ աւելի լաւն ասել՝ կը կորսնեք ձեր համարումն նրանց առջև — ձեր երկրորդ խնդրքին բացասական

պատասխան կստանաք: Առեւտրական գործերում ամենափոքր հանգամանքներին հարկաւոր է ուշադրութիւն դարձնել: Երբ ձեր պարտատէրը տեսնի ձեղ միշտ պարապմոնքի մէջ, — առաւտօտուց մինչև երեկոյ, — նա անհոգ կը լինի և մի քանի ամիս էլ աւելի կըսպասի. որովհետեւ յոյս ունի անպատճառ ստանալու. բայց եթէ նա տեսնի ձեղ բէլեարդ խաղալիս, կամ ձեր ձայնը լսի գնեսնից, այնպիսի ժամանակ, երբ դուք պէտքէ պարապէիք ձեր գործերով, նա վաղը իսկոյն կը դայ ձեղ մօտ իւր պահանջով, որ իսկոյն վճարէք իւր փողերը: Ձեր նոր սկսած գործերում, մանաւանդ որոնց մասին քիչ տեղեկութիւն ունիք, շատ զգուշութեամբ վարուեցէք. որանից կարելի է եղանակացնել թէ որքան ճիշտ և աղնիւ կը լինէք ձեր ապագայ գործունէ յութեան՝ ասպարեզում: հակառակ գէպքում, ձեր պարտատէրերն էլ չեն հաւատալ ձեր

իսօսքերին և սրանով կը կոտորվի ձեր համարումն:

Ո՞՞ք սիսալուիլ և մի՞ք շանալը շատ միամիտ մարդկանց նման, թէ այն բոլոր սպարանքը կամ փողը, որ որիները ձեզ հաւատ ընծայելով տուելին, ձեզ է պատկանում. և անհեռատեսութեամբ շռայլաբար մի՞ք մսխիլ: Որպէս զի այսպիսի սխալանքի միջ չընկնէք, զրեցէք ձեր բոլոր մուտքն ու ելքն. այն ժամանակը բոլորը ձեզ ճիշդ յայտնի լինելուց յետոց ձեզ իրաւունք չ'էք տալ աւելորդ ծախսեր անելու. որքան պակացնեք ծախսերի թիւը, այնքանով կ'աւելացնէք ձեր մուտքը, և հետեւաբար կ'ազատուիք չքաւորութիւնից:

Այս ընթացքը բռնելով՝ դուք կը գտնէք ձեզ համար հարստանալու ամենահաստատ ձանապարհը. — բոլորը բովանդակումէ երկու խօսքի մէջ աշխատանքի և ինտոյդանեան: Մի՞ք վատնել ոչ ժամա-

նակը և ոչ փողը. բայց աշխատեցէք որքան կարելի է, օգուտ քաղել թէ մէկից և թէ միւսից: Առանց աշխատանքի և խնայողութեան դուք ինքներդ ձեղ կըկորսնէք. իսկ ոնենալով այդ երկուսը՝ աշխատանքը և խնայողութիւնը, կարող էք ձեզանից հեռացնել ամէն անյաջուղութիւնները: — Ով ազնիւ միջոցով ինչ և իցէ մէկ բան է ձեռք բերում, ով խնայողութեամբ է ծախսեր անում, նա, անպատճառ, վաղ թէ ուշ կը հարստանայ:

## II

Ո՞ի ամենակարևոր խորհուրդ այն մարդկանց, որոնք ցանկանում են հարստանալ.

Փող ոնենալն շատ հեշտ բան է միայն այն մարդկանց համար, որոնք զիտեն գործ ածեն:

Եթէ տարեկան վեց ոսկի ունիք դործադրութեան մէջ, դուք կարող եք ձեռք բերել նրանով մինչև հարիւր ոսկի, եթէ միայն նոյզմուաբար և շատ զգուշութեամբ դործ գնէք: Ով ամէն օր իզուր տեղուց մսխումէ ն կոպէկ նա տարեկան կը մսխի ն ոսկուց աւելի. այսինքն հարիւր ոսկի դումանի տոկոսիք: Ով օրէկան ն կոպէկի ժամանակ է կորսնում, նա իւր ազատ կամքով նոյնպէս զրկում է իրան հարիւր ոսկու օգուտից: Ով անգործունէութեան մէջ մնալով կորսնումէ օրէկան մէկ մանէթի ժամանակ, նա ոչ թէ միայն զրկվում է այդ փողից, որ բոլորովին ճիշդ է, այլ և ծովն է ձգում այն օգուտները, որը կարող էր աւդ ժամանակից շահուել և որը իւր կեանքի ընթացքում կարող էր մ նշանաւոր դումար կազմուիլ:

## III

Եշի մեկ խորհուրդ

Ով իւր ապրանքը ժամանակով է վա-

ճառում, սովորաբար նա այնպիսի զին է նշանակում, որը հաւասարվում է ապրանքի արժողութեանը և թոյլ առւած ժամանակի առկոսիքին: Այսպէս ուրեմն ով ժամանակով է ապրանք առնում, նա վճարում է և տոկոսիք. իսկ ով կանխիկ (նադդ) վճարում է փողը, նա տոկոսիքը կառղ է ինքն շահացնել: Սրանից երեսում է որ ժամանակով գնած ապրանքի համար վճարում են և տոկոսիք: Ինչպէս երեսում է աւելի ձեռաւու է պատրաստի դրամով առնել քան թէ ժամանակով. որովհետեւ ժամանակով վաճառողը մտածելով, որ իւր պարտապանը գուցէ և ժամանակին ճշգութեամբ չը վճարի իւր փողը, որը շատ անդամ է պատահում, որուա համար նա աւելացնում է իւր ապրանքի արժողութիւնը:

Ինչպէս աեսնում ենք ժամանակով ապրանք գնող պարոնները աւելի են վճարում քան թէ որքան արժէր իրանց գնած ապ-

րանքը. — իսկ կանխիկ դրամով առնողները տպատվումն, կամ կարող են տպատուել այդ աւելորդ ծախսերից (վճարներից:)

Խնչ միջոց է հարկաւոր գրոծ գնել, որ միշտ գրապանում փող ունենալ.

Ներկայում ամեն մարդ գանձատվում է փողի պակասութեան համար եթէ այդ պիսի կարոտեալներին կարելի լինէր մի հնարք ցոյց տալ որ միշտ փող ունենային, — իհարկէ — քա շատ բարի գործ կը լինէր. հենց այս պատճառաւ ես ցանկանում եմ ցոյց տալ մի պարզ ձշմարտութիւն, որին հետեւլով ամէն մարդ կարող է իւր քառ կը փողով լիքն ունենալ և առատութեան մէջ ապրել: Սա շատ հասարակ բան է, և այս կանոնները իրագործելու համար մեծ դժուարութիւն չէ հարկաւոր:

Առաջինը՝ ճշմարտութիւնը և աշխատանքը ձեր ամեն գործերում ուղեկից ուսնեցէք:

Երկրորդը՝ օրէկան այնքան մախեցէք, որ ձեր եկամաքից աւելի քիչ լինի:

Այս կանոններին հետեւելով՝ գուք ձեր զրաբանը միշտ փողով լիքը կը տեսնէք և կը գագարէք ամէն վայրկեան աղաղակելուց թէ «մենք քաղցած ենք»: Ձեր պարագաները ձեզ չեն չափագած չենք: Ձեր պարագաները ձեզ չեն չափագած չենք և անջել և ձեր շքեղապարդ շորերը չեն փոխարինուիլ անշուք շորերի: Այն ժամանակը ձեր կեանքը խաղաղ ու հանգիստ կը լինի և ձեր սիրաը կը թնդայ ուրախութենից: Եթէ աշխատէք հետեւլու իմ խորհուրդներին, կը դիմէք դեպի բաղտաւորութեան ասպարէնը: Հեռացրէք ձեզանից արտմութիւնը. անձնանուր միք լինել յուսա՛հատութեան և աշխատեցէք անկախ ապրել: Այն ժամանակը գուք կը լինիք տպատ մարդիկ. ոչ հարուստնե-

րից կըթագնուիք, ոչ կըստորանոք նրանց առջեւ և ոչ էլ ձեզ այնքան գժբաղա կը կարծէք որովհետեւ անկախութիւնը, ոչ թէ միայն մեծ գործերում, այլ և ամենափոքր հանդամանքներում բաղտաւորացնում է մարդուս հաւասարացնելով նրան ամենահպարտ և ամենաազնիւ ու երեւելի մարդկանց հետ։ Ո՛չ, դուք միայն խոհեմ եղէք, ձեր աշխատանքը ձեզ միշտ ճանապարհորդ կըլինի տուաւոտոց մինչեւ երեկոյ։ Կ'ազնուաննայ ձեր խիղձը. — որանից յետոյ չը մոււանաք խնայողաբար գործ դնել ձեր փողերը, պահպանել (յետ ձգել) մի ամենափոքր մասը. այն ժամանակը միայն դուք կը համենէք կատարեալ բաղտաւորութեան. — անկախութիւնը ձեզ կարժանացնի զրահի և թաղի, — և այն ժամանակը դուք մեծահոգութեամբ կընայիք կերպասի շորերի վերայ և առանց ստորանալու, համարձակ կը դիտէք հա-

րուստ զարդերով զարդարուած վատարարոց մարդկանց վերայ։

## V

## (Սուվիթ)

Խմ կարծիքով, մենք շատ բաներում կարող էինք բարելաւացնել մեր կեանքը և հեշտութեամբ տանել մեղ պատահելիս գժրաղզութիւնները, եթէ միշտ, մեր ամէն մի գործում, զգուշութեամբ վարուելինք և թանգ չը վճարեինք մեր սուլիչե համար. որովհետեւ եթէ շատերը գժբաղտանում են, այդ իրանց անուշագրութիւնից և անկանոն կեանք վարելուցն է։ Դուք, իհարկէ, ինձ կը հարցնեք, թէ սրանով ես ի՞նչ եմ ուզում ձեզ ասել։ — Ես այս լուպէյիս ձեզ կը բացազրեմ պատմելով մի անցք այս սուլիչե մասին, որը պատահել է ինձ հետ։ — Մէկ տօն օր, երբ ես գեռ 5—6 տարեկան էի, իւ բարեկամներս ինձ բաւականին փող նուիրեցին։ Եւ հենց այն

լոպէջին շտագեցի դէսի խաղալիք ծա-  
խողի խանութը. բայց ձահապարհին ինձ  
պատահեց մի երկիրայ, որը սուլիչ էր  
ծախում. նրա սուլիչի ձայնը այնքան ինձ  
ախորժելի թռւեց, որ ես վճարեցի նրան  
իմ ունեցած բոլոր փողերս, մինչև վերջին  
կոպէին անգամ Աւրախացած յետ վաղեցի  
տուն և սկսեցի ամընդհատ սուլիչը այն.  
քան, որ շատ զզուացրի մեր տանեցւոյ:  
Եղբայրներս և քըրերս իմանալով, որ ես  
այդ անպիտան (Կրանց կարծիքով) խաղա-  
լիքի համար վճարել եմ իմ րոլոր փողերս,  
հաւատացրին ինձ, որ ես խաբուել եմ.—  
իմ վճարած փողերը տան անգամ աւելի  
էր սուլիչի արժողութիւնից: Այս բանը  
ինձ սաստիկ զայրացրեց, մանաւանդ, որ  
ինձ հասկացրին, եթէ ես չը շապէի և  
այնքան անզգոյշ վարուէի, այնքան փո-  
ղով ես կարողէի շատ խաղալիքներ առնել.  
բացի սրանից բոլորն ել ինձ վերայ ծիծա-  
ղում էին. իսկ ես բարկութիւնից (ջիգուու)

լաց էի լինում: այս բանը ինձ սաստիկ  
տիրութիւն պատճառեց, քան թէ զուար-  
ծութիւն: — Այս հանդամանքը ինքը  
ըստ ինքեան, մի չնչին բան է. բայց այն-  
պէս մեծ ներգործութիւն արաւ ինձ վե-  
րայ և այնպիսի մեծ օգուաներ տուեց, որ  
նրանից յետոյ, երբ ես ցանկանում էի այն-  
պիսի մի չնչին բան առնել իսկոյն յիշում  
էի այս անցքը ասելով ինքս ինձ՝ «Ես  
շատ չեմ վճարիլ սուլիչի համար» և այս-  
պէս պահպանում էի ձեռքս ընկած փողե-  
րը:

Համնելով երիտասարդական հասակիս,  
և կեանքի ասպարեզ մտնելով՝ ես սկսեցի  
ուշադրութեամբ նկատել մարդկանց բռ-  
նած գործերը. ես անդադար պատահում  
էի այնպիսի մարդկանց, որոնք թանգ էին  
վճարում մեկ սուլիչի համար:

Պատահէլով շատ անգամ այնպիսի  
մարդկանց, որոնք ձգտվում էին համնելու մի  
բարձը պաշտօնի և սորա համար զոհում

Էին իրանց ժամանակը, ազատութիւնը և  
մինչև սնգամ իրանց բարեկամներին, ես  
ինքս միշտ մոտածում էի. «այս մարդը  
թանգ է վճարում իւր սուլիչի համար»

Երբ մի ուրիշը մռնելով շռայլութեամբ  
պարապող մի խմբի մէջ, նրանց հետ  
խօսում ու ժամանակ էր կորնում, մի և  
նոյն ժամանակը մռուանում էր իւր սէպհա-  
կան գործերը, ես ասում էի. «աս նոյն-  
պէս թանգ է վճարում իւր սուլիչին»:

Մի ուրիշ անգամ պատահելով մի ժլա-  
տի, որը զըկում էր իրան ամենահար-  
կաւոր բաներից, ամէն ուրախութիւննե-  
րից հեռանում էր ժլատութեան պատճա-  
ռով ոչ ծանօթ ունէր և ոչ բարեկամ, և  
այս նրա համար, որ միայն փող ժողովի,  
«խեղջ մարդ», ասում էի ես. «դու ևս  
թանգ ես վճարում քո սուլիչին»:

Երբ պատահմամբ հանդիպում էի մի  
մարդու, որ ուշըդարձնելով իւր առող-  
ջապահական կանոնների վերայ, հետեւ

ում էր միայն զգայական զուտրձութիւն-  
ներին և որը խղճի ազնիւ զգացմունք-  
ները թողած չէր հոգում իւր բարեկե-  
ցութեան համար, ամէ է քո սիալը» ա-  
սում էի ես այն ժամանակը. «դու ուրա-  
խութեան փոխանակ զժբաղտութիւն ես  
որոնում և նոյնպէս թանգ վճարում քո  
սուլիչին»:

Երբ մէկ ուրիշը՝ ուշադրութիւն ըլ-  
դարձնելով իւր եկամուտքի վերայ, սիրում  
էր չափազանց շքեղ զարդարուիլ կահ  
ու կարասիք առնել փայլուն կառքերով  
շրջագայել, վերջը իւր պարտքերի թիւը  
աւելացնելով ընկնում էր բանդի մէ՝, «հի»  
ասում էի ես. «դու ևս թանգ վճարեցիր  
քո սուլիչին»:

Երբ ինձ պատահում էր տեսնել մի գե-  
ղեցիկ, համեստ և խէլօք աղջեկ, որի ճա-  
կատագիրը ձգել էր նրան մի խիստ և  
աղետ մարդոյ ձեռք և նա իւր կոպիտ և  
անքաղաքավարի վարմունքով ամէն ըսովէ

տանիջում էր նրան, «ինչքան ցաւելի է,»  
ասում էի ես. «այս խեղջ աղջեկը նոյնպես  
թանկ վճարեց իւր սուլիչնու»

**Վ**երջապէս ես համոզուեցի, որ մարդ-  
կանց գժբաղառութիւնների ամենամեծ մա-  
սք ծագում է նրանից, որ մենք իրակա-  
նապէս չենք նայում գործին, և մի չնչին  
սուլիչի համար ահազին դներ ենք վճա-  
րում:

**Ե**յնու ամենայնիւ, ես զգում եմ, որ  
այդպիսի մարդկանց հարկաւոր է կարեկից  
լինել և ընայելով այն բոլոր հեշտ միջոց-  
ներին, որ ես բաղդ ունեցայ ձեզ առա-  
ջարկնու, կան և երկրիս վերայ այն աս-  
տիճանի գայթագուցուցիչ բաներ, որ եթէ  
նրանք էլ աճրդախօսութեամբ ծախուէին,  
շատ կարելի է, որ ես ևս լնինի այդ  
փորձանքի մէջ և իմ կեանքում մի ան-  
դամ էլ թանգ վճարէի որպիսի և իցէ մի  
սուլիչի համար:

Վ Ե Ր Զ:

ՀՀ Ազգային գրադարան



NL0343568

